

Բեռլինյան խորհրդածաղուվր քննարկել է Ցեղասպանության ճանաչման խնդիրները

Գերմանիայում գործող Ցեղասպանության ճանաչման հանձնախումբն (ՑՃՀ) Հունիսի 28-29-ր Բեռլինում հրավիրված խորհրդածոթովում քննարկել է Գերմանիայի խորհրդարանում Հայոց գեղասպանության ճակատագրի հիմնահարցը, ինչպես նաև այդ հարցում հանձնախմբի որդեգրած հետագա մարտավարությունը: Մեր թերթին հասցեագրած մամուլի հարցազրույցում մեջ Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի համանախագահ Ժորժալ Բոնարդիան հայտնել է, որ ՑՃՀ-ն 2000 թ.-ի ապրիլի 13-ին 5000 Եւ Ֆունկֆուրտի «Ընդդեմ գեղասպանության միությունը» Թուրքիայի քաղաքացիների 10000-ից ավելի ստորագրություններ հանձնեցին Բունդեսթագի խնդրագրերի հանձնախմբին:

2000 թ.-ի ապրիլի 5-ին Բունդեսթագը որոշեց խնդրագրի նկատմամբ դիքորոշման իրավունքը փոխանցել արտգործնախարարությանը, որպեսզի Հայոց գեղասպանության ճանաչման անհրաժեշտության հարցը պարզաբանվի «Գերմանիայի եւ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների շրջանակում, որը Գերմանիայի ժողովրդի պատկանելի մասի տեսակետն է»: Այսպիսով, խնդրագրի հարցը բարձրագույն կառավարու-

մակարդակ է, առաջին անգամ Գերմանիայի պատմության մեջ, դարձավ կառավարությունների երկկողմանի խոսակցության առարկա: Մակալն, 2001թ.-ի հոկտեմբերին գերմանական օրենսդիր մարմինը քննարկելով դիմումը հրաժարվեց պաշտամենտական որեւէ որոշումից կամ դիքորոշումից: Ըստ ՑՃՀ-ի համանախագահ դոկտ. Թեաս Հոֆմանի զեկույցի, Գերմանիայում Ցեղասպանության ճանաչումը ձախողելու հիմնական պատճառներն էին 2001 թ.ի հունիսին պաշտոնապես հիմնված «Թուրք-հայկական հաշտեցման հանձնախմբի» ծավալած կարճատև ու անպտուղ գործունեությունը եւ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ի անաբեկությունը:

Հինք ընդունելով ամերիկացի սոցիոլոգ Ռոտրֆ Ռուելին, որը նոր ժամանակների գեղասպանության ուսումնասիրության հիմնադիրներից է, ՑՃՀ -ն եկավ այն եզրակացության, որ «1900-1923 թ.թ. թուրքական տարբեր վարչակարգեր կոտորել են 3,5 մլն-ից մինչեւ 4 մլն 300 հազար հայերի, հույների, նեստորականների եւ այլ քրիստոնյաների»:

Իր ողջունի խոսքում Գերմանիայում ՀՀ դեսպան Կարինե Ղահնյանն ընդգծեց, որ Հայոց գեղասպանության ճանաչումը Հա-

յաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն է, եւ իր կառավարությունն այս հարցում Սփյուռքի հետ համագործակցում է: Հայաստանի Հայ դատի կենտրոնական գրասենյակի եւ Մյունխենի հայկական հարցերի հաստատության տնօրեն դոկտ. Էդուարդ Հովհաննիսյանն իր ելույթում շեշտեց, որ Ցեղասպանության ճանաչումը կամ դատապարտումը միայն բարոյական հարց չէ, այլ նաև քաղաքական պահանջների գոհացում: Ելույթ ունեցավ նաև աստվածաբան, ավետարանական, Բեռլինի կաթողիկե եկեղեցու հաստատության մշակութային բաժնի պետ Մանֆրեդ Ռիխտերը:

Հայաստանից, Շվեյցարիայից եւ Գերմանիայից ժամանած համագումարի մասնակիցները բուն ու կառուցողական քննարկման մթնոլորտում հաստատագրեցին շարունակել Հայոց գեղասպանության ճանաչման ուղղությամբ աշխատանքները: Խորհրդածոթովին մասնակցեցին նաև արամեական քրիստոնյաների եւ պոնտոսպոնյանների ներկայացուցիչները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպան գերմանաբնակ թուրք ներկայացուցիչը: